ԱՐԵՎԻԿ ՍԱՆԱՄՅԱՆ
Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա, բակալավրիատ, 2-րդ կուրս

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *տնտեսական աճ, աշխատանքի արտադրողականություն, զբաղվածության մակարդակ, արտադրողականության կոնվերգենցիա*

Յուրաքանչյուր երկրի տնտեսական համակարգի արդյունավետության գնահատականը տնտեսական աճի և բարեկեցության ապահովումն է: Ի տարբերություն բնական ռեսուրսներով հարուստ երկրների՝ Հայաստանը բարեկեցության ցանկալի մակարդակ ապահովելու համար պետք է գլխավորապես հիմնվի տնտեսական մրցունակության վրա, որի աճի ուժը խթանելու հիմնական մարտահրավերներից է արտադրողականության բարձրացումը:

Սույն հոդվածում վիճակագրական գործիքակազմի կիրառմամբ վերլուծվել է ՀՀ տնտեսության աշխատանքի արտադրողականության մակարդակը և դրա շարժընթացը՝ արտադրողականության բարձրացման խնդիրների բացահայտման համատեքստում:

Ընդհանուր առմամբ, ստացված արդյունքները փաստում են, որ վերջին տարիներին ՀՀ տնտեսությունում գրանցվել է արտադրողականության մակարդակի աճ: Սակայն, աշխատանքի արտադրողականության աճի տեմպերը պահանջում են ավելի բարձր տնտեսական աճ՝ երկրում գործազրկության, աշխատատեղերի ստեղծման, հեռզիեֆե ավելացող բևեռացման և աղքատության խնդիրները լուծելու համար:

Ներածություն: Զարգացած շուկայական հարաբերությունների պայմաններում ժամանակակից տնտեսական համակարգում երկարաժամկետ տնտեսական զարգացում ապահովելու համար որոշիչ է արտադրության արդյունավետության բարձրացումը աշխատանքի արտադրողականության աճի հիման վրա: Աշխատանքի արտադրողականության աճն է տնտեսական աճի հիմնական աղբյուրը և բնակչության կենսամակարդակի բարելավման կարևոր գործոններից մեկը: Այդ աճը հնարավորություն է ընձեռում ավելացնելու իրական աշխատավարձը, բարելավելու արտադրության մրցունակությունը, մեծացնելու հարկման բազան:

Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը բնակչության կյանքի որակի բարձր մակարդակի ապահովումն ու դրա շարունակական բարելավումն է: Այդ նպատակի իրագործումը մեծապես կախված է տնտեսությունում աշխատանքի արտադրողականության մակարդակից, քանի որ վերջինս, ըստ էության, աշխատանքի կամ կապիտալի յուրաքանչյուր ծախսված միավորի դիմաց ստացված արդյունքն է, որը կախված է ոչ միայն արտադրանքի որակից ու հատկանիշներից, այլ նաև արտադրական գործընթացների արդյունավետությունից:

Թվարկված փաստարկները վկայում են աշխատանքի արտադրողականության վիճակագրական ուսումնասիրության արդիականության մասին, ինչին էլ նվիրված է սույն հոդվածը:

Հետազոտության նպատակն է վերլուծել ՀՀ տնտեսության արտադրողականության մակարդակը և շարժընթացը, բացահայտել արտադրողականության բարձրացման հիմնախնդիրները:

Գրականության ակնարկ: Արտադրողականության բարձրացման խնդիրներին անդրադարձ է կատարվել մի շարք հետազոտողների ու տնտեսագետների աշխատություններում: Հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են տարբեր աղբյուրներ: Օրինակ, ինժեներ-մեխանիկ Հարինգտոն Էմերսոնի «Արտադրողականության 12 սկզբունքները» մեծ հետաքրքրություն է առաջացրել և ուշադրության արժանացել ոչ միայն ԱՄՆ-ի, այլ նաև այլ երկրների մասնագետների և ձեռնարկատերերի կողմից: «*Արտադրողականություն*» կամ «*էֆեկտիվություն*» հասկացությունը հենց Էմերսոնն է առաջինը ներմուծել կառավարման գիտություն: Ըստ հեղինակի՝ այս սկզբունքները կարող են ընդունվել որպես միջոցառում և այդ միջոցառման օգնությամբ կարող է հետազոտվել ցանկացած արտադրական ձեռնարկություն, յուրաքանչյուր գործողություն: Այդ ձեռնարկությունների հաջողությունը որոշվում և չափվում է արտադրողականության տասներկու սկզբունքներից դրանց կազմակերպման շեղման աստճանով:

Կատարվել են հետազոտություններ McKinsey Global Institute-ի (MGI) և Մոսկվայի McKinsey & Company-ի կողմից, որոնց նպատակը եղել է անհրաժեշտ գործողությունների շրջանակը որոշելը, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնելու Ռուսաստանում արտադրողականության մակարդակը: Ուսումնասիրության առանցքը աշխատանքի արտադրողականությունն է, որը հաշվարկվում է որպես մեկ աշխատողի համար արտադրված (կամ մատուցված ծառայությունների) ապրանքների ծավալ:

Մեթոդաբանություն: Արտադրանքի չափի միավորի ընտրությունից կախված՝ տարբերում են աշխատանքի արտադրողականության մակարդակի չափման բնաիրային, աշխատանքային և արժեքային մեթոդները[1]:

Բնաիրային մեթոդն առավել ճշգրիտ է բնութագրում աշխատանքի արտադրողականության մակարդակը, քանի որ արտադրանքի հաշվառումը կատարվում է բնական չափման միավորներով (տոննա, կգ, հատ, մետր և այլն), և աշխատանքի արտադրողականության մակարդակն արտահայտվում է միավոր ժամանակում արտադրված արտադրանքի՝ բնաիրային չափման միավորների քանակով: Այս մեթոդի արժանիքը համարվում է աշխատանքի արտադրողականության մակարդակի չափման օբյեկտիվությունը և հաշվարկի պարզությունը: Սակայն, բնաիրային մեթոդի օգտագործման ոլորտը բավականին սահմանափակ է: Այն կարող է օգտագործվել միատեսակ արտադրանք արտադրող ճյուղերի, ձեռնարկությունների աշխատանքի արտադրողականության մակարդակների համեմատության և շարժընթացի վերլուծության համար:

Աշխատանքի արտադրողականության չափման արժեքային մեթոդի կիրառման բարդությունը որոշակի պայմաններում արտադրության ծավալի հաշվարկման եղանակի ընտրությունն է:

Արժեքային մեթոդը համարվում է աշխատանքի արտադրողականության մակարդակի չափման առավել բազմակողմանի և լայն կիրառվող մեթոդ, որի հիմքում արժեքային արտահայտությամբ արտադրանքի ծավալի համադրումն է կենդանի աշխատանքային ծախսերի հետ: Այս մեթոդը հնարավորություն է

---

[1] Տե՛ս **Մ. Մովսիսյան, Ա. Շիրինյան**, Աշխատանքի արտադրողականության մակարդակի գնահատման և շարժընթացի ուսումնասիրության վիճակագրական հիմնախնդիրները, «Բանբեր ՀՊՏՀ», 2018 թ., N 4, էջ 98:

տալիս տարբեր արտադրանքների արտադրության պայմաններում չափելու աշխատանքի արտադրողականության մակարդակը և շարժընթացը: Այն ապահովում է ամբողջ տնտեսության, առանձին տարածքների և ճյուղերի վերաբերյալ ամփոփ տվյալների ստացման հնարավորությունը:

Սույն հետազոտության շրջանակներում նախապատվությունը տրվել է արտադրողականության մակարդակի չափման արժեքային մեթոդին:

Միջազգային կազմակերպությունների և առանձին երկրների ազգային վիճակագրական մարմինների կողմից, տնտեսության և ըստ տնտեսական գործունեության տեսակների աշխատանքի արտադրողականության մակարդակի չափումներում, որպես արտադրության արդյունքային ցուցանիշ ընդունվում են համապատասխանաբար համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և համախառն ավելացված արժեքը (ՀԱԱ): Աշխատանքի արտադրողականությունը որոշվում է որպես մեկ զբաղվածի հաշվով ՀՆԱ կամ ՀԱԱ մեծություն:

Վերլուծություն և արդյունքների մեկնաբանություն: 2002-2007 թթ. ՀՀ-ում պահպանվել է կայուն տնտեսական աճի վարքագիծը: Սակայն գլոբալ տնտեսական ճգնաժամը հարվածեց նաև Հայաստանի տնտեսությանը: 2009 թ. գրանցվեց տնտեսության խոր՝ 14.2% անկում, որին հաջորդեց դանդաղ վերականգնում: Բավականին զգալի էր 2012 թ. ՀՆԱ-ի աճը՝ 7.2%, սակայն դա դեռևս բավարար չէր հասնելու 2008 թ. տնտեսական ակտիվության մակարդակին: 2013 թ. իրական ՀՆԱ-ի աճի տեմպերը կրկին դանդաղել են: 2019 թ. Հայաստանում արձանագրվել է 7.6% տնտեսական աճ, որը 2.4 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: 2020 թ. ՀՀ տնտեսությունը կրել է միմյանց հաջորդած երկու շոկերի՝ կորոնավիրուսային համավարակի և ռազմական դրության ազդեցությունները: Համավարակի տարածման կանխարգելման նպատակով իրականացված միջոցառումների, տարեվերջի ռազմական դրության և դրանց հաջորդած անորոշությունների բարձր մակարդակի պայմաններում 2020 թ. ՀՀ-ում արձանագրվել է 7.4% անկում:



Գծապատկեր 1. ***ՀՀ տնտեսական աճի շարժընթացը 2002-2020 թթ.***[1]

Ինչպես հայտնի է, տնտեսական աճի տեմպը կախված է տնտեսության իրական հատվածում զբաղվածների թվաքանակից և նրանց աշխատանքի արտադրողականության մակարդակից:

[1] Այս և մյուս գծապատկերները կազմել է հեղինակը, աղբյուրը՝ https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=AM

Աղյուսակ 1

ՀՀ տնտեսության աշխատանքի արտադրողականության մակարդակի շարժընթացը 2002-2020 թթ.[1]

	2002	2004	2006	2008	2010	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
ՀԱԱ (հիմնական գներով), մլրդ ՀՀ դրամ	1230.6	1748.1	2430.8	3162.9	3071.1	3542.5	4049.2	4282.3	4507.8	4571.2	4992.4	5365.9	5806.7	5508.7
Զբաղվածների թվաքանակը, հազ. մարդ	1106.4	1081.7	1092.4	1117.6	1185.2	1172.8	1163.8	1133.5	1072.6	1006.2	1011.7	1048.5	1077.4	1052.4
Աշխատանքի արտադրողականության մակարդակը, մլն ՀՀ դրամ	1.11	1.62	2.23	2.83	2.59	3.02	3.48	3.78	4.20	4.54	4.93	5.12	5.39	5.23
Աշխատանքի արտադրողականության մակարդակի բացարձակ հավելաճը, մլն ՀՀ դրամ	-	0.28	0.36	0.26	0.01	0.16	0.46	0.30	0.42	0.34	0.39	0.18	0.27	-0.16
Աշխատանքի արտադրողականության մակարդակի հավելաճի տեմպը (2002 թ. նկատմամբ), %	-	45.3	100.1	154.4	133.0	171.6	212.8	239.7	277.9	308.4	344.1	361.1	385.5	371.6
Աշխատանքի արտադրողականության մակարդակի հավելաճի տեմպը (նախորդ տարվա նկատմամբ), %	-	21.2	19.2	10.0	0.5	5.5	15.2	8.6	11.2	8.1	8.6	3.7	5.3	-2.9

[1] Աղյուսակը կազմվել է հեղինակի հաշվարկների հիման վրա, աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազաներ, http://armstatbank.am

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ վերջին տարիներին շուրջ 4.9%-ով կրճատվել է ՀՀ տնտեսությունում զբաղվածների թվաքանակը, սակայն այդ տարիներին, բացառությամբ 2009 և 2020 թթ., տնտեսության անկում չի արձանագրվել, ինչը վկայում է, որ տնտեսությունում տեղի է ունեցել արտադրողականության աճ:

ՀՀ տնտեսության արտադրողականությունը 2002-2020 թթ. աճել է ավելի քան 4.7 անգամ՝ յուրաքանչյուր տարի ենթարկվելով մեծ փոփոխություններ: Այսպես, արտադրողականության ամենամեծ հարաբերական հավելաճը դիտվել է 2004 թ.՝ նախորդ տարվա համեմատ կազմելով 21.2%, որից հետո աճի տեմպերը դանդաղել են, իսկ 2009 թ. գրանցվել է արտադրողականության անկում՝ շուրջ 8.9%-ով: 2010 թ. կրկին նկատվել է ՀՀ տնտեսության արտադրողականության բարձրացում, բայց դանդաղ տեմպերով:

Հետճգնաժամային ժամանակահատվածում արտադրողականության աճի ամենաբարձր տեմպերը դիտվել են 2013 և 2015 թթ.՝ համապատասխանաբար 15.2 և 11.2%: 2019 թ., նախորդ տարվա համեմատ, ՀՀ տնտեսության աշխատանքի արտադրողականությունն աճել է ընդամենը 5.3%-ով, իսկ 2020 թ.՝ նվազել 2.9%-ով:

Այսպիսով, 2002-2020 թթ. ՀՀ տնտեսության արտադրողականությունը տարեկան միջին հաշվով աճել է 8.6%-ով, որի արդյունքում 2020 թ. տնտեսության մեկ զբաղվածն ապահովել է տարեկան 5.23 մլն ՀՀ դրամի ավելացված արժեք:

Արտադրողականության այսպիսի բարձր աճը կարող է բացատրվել երկու հիմնական գործոնով.

- տեխնոլոգիաների արդիականացմամբ, կառավարման կարողությունների, հմտությունների կատարելագործմամբ պայմանավորված արտադրողականության իրական աճով,
- տնտեսության ոչ ֆորմալ հատվածի կրճատմամբ. Հայաստանում ոչ ֆորմալ տնտեսությունը հիմնականում վերաբերում է այն դեպքերին, երբ չի գրանցվում գործունեությունը կամ վաճառքի իրական ծավալի փոխարեն ավելի ցածր ցուցանիշ է ներկայացվում: Սակավադեպ է, երբ չեն գրանցվում աշխատողները (տարածված տարբերակը աշխատակիցների իրական աշխատավարձերը թաքցնելն է): Նույնիսկ եթե պաշտոնական վիճակագրությունը ներառում է ստվերային շրջանառության որոշակի հատվածը, այդուհանդերձ, չգրանցված գործունեության ծավալը դեռևս բավականին մեծ է: Արդյունքում, ֆորմալ տնտեսության ընդլայնումը հանգեցրել է մեկ աշխատողի հաշվով գրանցվող թողարկման ծավալների մեծացմանը:

Չնայած արձանագրված դրական միտումներին՝ աշխատանքի արտադրողականության մակարդակով ՀՀ-ն դեռևս զգալիորեն զիջում է եվրոպական և տնտեսապես զարգացած այլ երկրների: Հիմք ընդունելով Համաշխարհային բանկի տվյալները՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի տնտեսության արդյունավետությունը աշխարհում ամենացածրերից է: Եթե ՀՀ-ում մեկ զբաղվածին ընկնող ՀՆԱ-ն 2020 թ. կազմել է 39871.7 ԱՄՆ դոլար (ըստ գնողունակության պարիտետի և հաստատուն գների, միջազգային դոլար, 2017), ապա ԱՄՆ-ում՝ 130.8 հազ. ԱՄՆ դոլար, Ռուսաստանում՝ 57.2 հազ. ԱՄՆ դոլար, ԵՄ երկրներում այն գտնվում է 100.2 հազ., իսկ Կենտրոնական Եվրոպայի և Բալթյան երկրներում՝ 68.5 հազ. ԱՄՆ դոլարի սահմաններում:

Նշված ցուցանիշով Հայաստանը հարևան երկրներից գերազանցում է միայն Վրաստանին, որտեղ մեկ աշխատողը տարեկան արտադրում է 31239.5 ԱՄՆ դոլար ՀՆԱ[1]: Հետևաբար, աշխատանքի արտադրողականության բարձրացումը առանցքային նշանակություն ունի ՀՀ տնտեսության զարգացման և մրցունակության բարձրացման հարցերում:

Տնտեսական աճի և մրցունակության ուսումնասիրություններում տարածված է կոնվերգենցիայի (զուգամիտման, համահավասարեցման) գաղափարը: Ըստ տարբեր տեսությունների՝ աղքատ երկրներն ավելի արագ են աճում, քան հարուստները, ինչը բացատրվում է հետևյալ հիմնական ենթադրություններով:

Նախ, տնտեսական աճի Սոլոուի մոդելը ցույց է տալիս, որ երկարաժամկետ հատվածում երկրները հակված են հասնելու իրենց կայուն հավասարակշիռ մակարդակին: Հետևաբար, քանի որ աղքատ երկրները համեմատաբար հեռու են իրենց կայուն հավասարակշիռ մակարդակից, ակնկալվում է, որ դրանք ավելի արագ կաճեն՝ հարուստ երկրների մակարդակին հասնելու նպատակով:

Հարուստ երկրներում կապիտալի շահութաբերությունը ավելի ցածր է, այդ իսկ պատճառով կապիտալը հիմնականում հարուստ երկրներից հոսում է դեպի համեմատաբար աղքատ երկրներ՝ նպաստելով այդ երկրների կոնվերգենցիային և հարուստ երկրների հետ տնտեսական աճի ու զարգացման մակարդակների տարբերության կրճատմանը:

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս, որ մեկ շնչի հաշվով ավելի ցածր ՀՆԱ ունեցող երկրները բազային տարիների ընթացքում ունենում են մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ավելի բարձր տարեկան աճ, քան առաջադեմ և զարգացած տնտեսությունները՝ հաստատելով կոնվերգենցիայի առկայությունը ժամանակի ընթացքում:



Գծապատկեր 2. ***1 շնչի հաշվով ՀՆԱ-ն (հաշվարկված գնողունակության պարիտետով, հաստատուն, 2017 թ., միջազգային դոլար) և 2002-2020 թթ. միջին տարեկան աճի տեմպը՝ ըստ երկրների[2]***

[1] Աղբյուրը՝ https://data.worldbank.org/indicator/SL.GDP.PCAP.EM.KD?end=2019&start=1991&view=chart

[2] Աղբյուրը՝ ՀԲ ՀՋՑ https://data.worldbank.org/indicator

Աշխատանքի արտադրողականության կոնվերգենցիան ենթադրում է տարբեր երկրների արտադրողականության մակարդակների համահավասարեցում: Տարբեր տնտեսագիտական ուղղությունների ներկայացուցիչներ համակարծիք են այն տեսության շուրջ, որ արտադրողականության մակարդակը և արտադրողականության աճը հակադարձ համեմատական են, իսկ տարբեր երկրների արտադրողականության մակարդակները համահավասարեցվելու միտում ունեն: Պատմականորեն, ցածր և միջին եկամուտ ունեցող տնտեսություններն իրենց աշխատանքի արտադրողականության աճի տեմպով գերազանցում են համաշխարհային միջին և բարձր եկամուտ ունեցող տնտեսությունների արտադրողականության աճի տեմպերը:

Գծապատկեր 3-ը փաստում է, որ արտադրողականության կոնվերգենցիայի միտումը նկատվել է նաև 2020 թ., և ցածր ու միջին եկամուտ ունեցող երկրները, համաշխարհային միջինի և բարձր եկամուտ ունեցող տնտեսությունների համեմատ, շարունակում են գրանցել արտադրողականության աճի ավելի բարձր ցուցանիշներ:



Գծապատկեր 3. ***Արտադրողականության աճի տեմպը՝ ըստ երկրների, 2002-2020 թթ.***[1]

2018 թվականից Համաշխարհային բանկը Հայաստանը դասել է բարձր միջին եկամուտ ունեցող տնտեսությունների շարքին: Այսինքն, որպես այդպիսին, միջինում մեկ անձի հաշվով աշխարհի միջին և բարձր եկամուտ ունեցող երկրների համեմատությամբ, Հայաստանն ունի ՀՆԱ-ի բարձր աճի ցուցանիշ՝ հաստատելով, որ հետևում է աշխարհում արտադրողականության կոնվերգենցիայի միտմանը:

Աշխատանքի արտադրողականության կոնվերգենցիան նաև լուրջ մարտահրավերներ է ստեղծում տնտեսությունների համար: Աշխատանքի արտադրողականության աճի տեմպերն ավելի բարձր տնտեսական աճ են պահանջում՝ երկրում գործազրկության, աշխատատեղերի ստեղծման, հետզհետե ավելացող բևեռացման և աղքատության խնդիրների լուծման համար:

ՀՀ աշխատանքի արտադրողականության աճը, լինելով ավելի բարձր, քան տնտեսական աճի տեմպը, զգալի սոցիալական մարտահրավերներ է ստեղծում Հայաստանի նման երկրի համար, որը գործազրկության և աղքատության բարձր մակարդակ ունի:

[1] Աղբյուրը՝ նույնը:

Այսպես, 2002-2020 թթ. ՀՀ տնտեսությունն աճել է տարեկան միջին հաշվով 5.4%-ով, մինչդեռ աշխատանքի արտադրողականության աճի տեմպը նույն ժամանակահատվածում կազմել է շուրջ 9.4%: Արդյունքում, հանրապետությունում զբաղվածների թիվը դիտարկվող ժամանակահատվածում նվազել է շուրջ 54 հազ. մարդով՝ 2002 թ. 1.1064 միլիոնից 2020 թ. հասնելով 1.0524 միլիոնի: Այսպիսով, տնտեսական աճի տեմպը, աշխատանքի արտադրողականության աճի բարձր տեմպին զուգահեռ, բավարար չի եղել աշխատատեղերի հավելաճ ապահովելու համար, որն անհրաժեշտ պայման էր առկա գործազրկության մակարդակի նվազման համար:



Գծապատկեր 4. ***ՀՀ արտադրողականության մակարդակի, տնտեսական աճի և զբաղվածության կապը 2002-2020 թթ.***[1]

Կարևորվում է ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում արտադրողականության մակարդակի ուսումնասիրությունը:

Տնտեսության տարբեր ոլորտներում արտադրողականության ցուցանիշներն էականորեն տարբերվում են միմյանցից: Դա պայմանավորված է տնտեսության կառուցվածքով, մասնավորապես՝ աճի մեծ ներուժ ունեցող ճյուղերով: Ներկայումս երկրի հարստության ճնշող մասը ստեղծվում է առևտրի և ծառայությունների ոլորտում, իսկ արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը գրեթե հավասար մասնակցություն ունեն այդ գործում[2]:

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ 2020 թ. Հայաստանում զբաղվածների գերակշիռ մասը գտնվել է գյուղատնտեսությունում, սակայն այս ոլորտն ապահովել է ՀԱԱ-ի ընդամենը 15%-ը: Այսպես, գյուղատնտեսությունում զբաղված է եղել 266.2 հազ. մարդ կամ զբաղվածների ընդհանուր թվաքանակի 25.4%-ը, ինչը շուրջ 2 անգամ գերազանցել է արդյունաբերությունում զբաղվածների թվաքանակը (138.4 հազ. մարդ): Յուրաքանչյուր գյուղացի ստեղծել է շուրջ 3.1 մլն ՀՀ դրամի արտադրանք, որը, տնտեսության մյուս ճյուղերի համեմատ, ամենացածրերից է: Հայաստանի գյուղատնտեսության արտադրողականության ցածր մակարդակն էականորեն ազդում է տնտեսության արտադրողականության ընդհանուր մակարդակի վրա: Գյուղացու աշխատանքն ամենածանրերից մեկն է, սակայն այն սեզոնային է՝ գյուղացին աշխատում է ընդամենը 8 կամ 9 ամիս: Այստեղ առկա է մշտա-

[1] Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազաներ, http://armstatbank.am
[2] Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազաներ, http://armstatbank.am

կան թերբեռնվածություն, քանի որ ձմռանը պարապ մնացած գյուղացին, որպես կանոն, աշխատանք գտնել չի կարողանում:

Աղյուսակ 2

ՀՀ աշխատանքի արտադրողականության մակարդակը՝ ըստ տնտեսական գործունեության որոշ տեսակների, 2020 թ.[1]

Տնտեսական գործունեության որոշ տեսակներ	*ՀԱԱ, մլրդ ՀՀ դրամ*	*Զբաղվածների թվաքանակը*		*Աշխատանքի արտադրողականության մակարդակը, մլն ՀՀ դրամ*
		ընդամենը, 1000 մարդ	*տեսակարար կշիռը տնտեսությունում զբաղվածների ընդհանուր թվում, %*	
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	693.2	266.2	25.4	3.09
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	233.5	9.1	0.9	19.03
Մշակող արդյունաբերություն	765.6	104.1	9.9	6.52
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	216.9	21.5	2.1	10.27
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	25.0	3.7	0.4	7.92
Շինարարություն	431.4	98.4	9.4	4.04
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	666.0	119.1	11.4	5.72
Կացության և հանրային սննդի կազմակերպում	70.2	26.3	2.5	4.16
Տեղեկատվություն և կապ	237.6	21.0	2.0	9.22
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	415.9	14.6	1.4	21.88
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	454.8	2.4	0.2	198.46
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	336.7	90.7	8.7	2.78
Կրթություն	173.2	105.6	10.1	1.45
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	342.8	46.2	4.4	5.51
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	302.2	16.6	1.6	20.45
Սպասարկման այլ ծառայություններ	43.6	30.9	2.9	1.80
Ընդամենը ՀՀ	**5508.7**	**1052.4**	**100.0**	**5.23**

Մտահոգություն է առաջացնում վերջին տարիներին արդյունաբերությունում զբաղվածների տեսակարար կշռի նվազումը: Եթե 2002 թ. արդյունաբերությանը բաժին էր ընկնում զբաղվածների ընդհանուր թվաքանակի 17.4%-ը, ապա 2020 թ.՝ 13.2%-ը: Սակայն, այս տարիներին արդյունաբերության անկում չի արձանագրվել (բացառությամբ 2009 և 2020 թթ.): Սա նշա-

[1] Աղբյուրը՝ նույնը:

նակում է, որ այս ոլորտում տեղի է ունեցել արտադրողականության աճ, որի արդյունքում 2020 թ. ոլորտի մեկ զբաղվածն ապահովել է 7.9 մլն ՀՀ դրամի արտադրանք:

Շինարարությունում 2020 թ. զբաղված է եղել 98.4 հազ. մարդ: Դա շուրջ 2.5 անգամ գերազանցում է 2002 թ. մակարդակը, սակայն դեռևս զիջում է նախաճգնաժամային 2008 թ. 100 հազարի ցուցանիշին: Ոլորտի յուրաքանչյուր զբաղված ստեղծել է շուրջ 4.04 մլն ՀՀ դրամի արտադրանք:



Գծապատկեր 5. ***Աշխատանքի արտադրողականության մակարդակը և զբաղվածության մեջ մասնաբաժինը՝ ըստ տնտեսական գործունեության որոշ տեսակների, 2020 թ.***[1]

Տնտեսական գործունեության որոշ տեսակների աշխատանքի արտադրողականության մակարդակը և ընդհանուր զբաղվածության մեջ դրանց մասնաբաժինն առավել պատկերավոր ներկայացված են գծապատկեր 5-ում:

2020 թ. արտադրողականության ամենաբարձր ցուցանիշն ունեցող ճյուղն անշարժ գույքի հետ կապված գործունեությունն է (198.5 մլն ՀՀ դրամ՝ մեկ զբաղվածի հաշվով), որին հաջորդում են ֆինանսական և ապահովագրական գործունեության (21.88 մլն ՀՀ դրամ՝ մեկ զբաղվածի հաշվով) ու մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտները (20.45 մլն ՀՀ դրամ՝ մեկ զբաղվածի հաշվով): Միևնույն ժամանակ, աշխատողների ընդամենը 3.2%-ն է զբաղված նշված առաջատար երեք ճյուղերում, ինչը նշանակում է, որ աշխատուժի մեծ մասն ընդգրկված է ցածր արտադրողականությամբ աշխատանքներում: Նվազագույն արտադրողականություն ունեցող չորս ոլորտներում կենտրոնացած է աշխատուժի կեսից ավելին:

Եզրակացություն: Ընդհանրացնելով կարող ենք արձանագրել, որ Հայաստանը հետևում է աշխարհում արտադրողականության կոնվերգենցիայի միտմանը, որի վկայությունն է վերջին տարիներին ՀՀ տնտեսությունում գրանցված արտադրողականության մակարդակի ավելի բարձր աճը համաշխարհային միջինի և բարձր եկամուտ ունեցող տնտեսությունների համեմատ: Սակայն, միայն աշխատանքի արտադրողականության աճը բավարար չէ առաջատար տնտեսություններին հասնելու և Հայաստանի տնտեսական իրավիճակի բարելավման համար: Որոշ դեպքերում դա կարող է հանգեցնել

[1] Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ տվյալների բազաներ, http://armstatbank.am

նույնիսկ ավելի շատ տնտեսական խնդիրների, ինչպիսիք են գործազրկության մակարդակի աճը և աշխատատեղերի կրճատումը:

Վերոնշյալ տնտեսական խնդիրները լուծելու և Հայաստանը զարգացած երկրների աշխատանքային արտադրողականության և տնտեսական մակարդակին հասցնելու նպատակով ՀՆԱ-ի աճի, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծման ավելի արագ տեմպեր ու բարձր մակարդակ է անհրաժեշտ թիրախավորել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց–2019, Աշխատատեղերի ապագան Հայաստանում, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ, 2017, 136 էջ:
2. Մովսիսյան Մ., Շիրինյան Ա., Աշխատանքի արտադրողականության մակարդակի գնահատման և շարժընթացի ուսումնասիրության վիճակագրական հիմնախնդիրները, «Բանբեր ՀՊՏՀ», 2018, N 4:
3. Эмерсон Г., 12 принципов производительности, Екатеринбург 1999.
4. Маккензи, Эффективная Россия. Производительность как фундамент роста, 2009.
5. http://armstatbank.am
6. https://data.worldbank.org/indicator
7. https://www.weforum.org

АРЕВИК САНАМЯН

Актуарная и финансовая математика, бакалавриат, 2-й курс,

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ПРОБЛЕМ ПОВЫШЕНИЯ ПРОИЗВОДИТЕЛЬНОСТИ В РА

Ключевые слова. *экономический рост, производительность труда, уровень занятости, конвергенция производительности*

Оценка эффективности экономической системы каждой страны обеспечение экономического роста и благосостояния. В отличие от богатых природными ресурсами стран, для обеспечения желаемого уровня благосостояния Армения должна основываться главным образом на экономической конкурентоспособности, силой роста которой является повышение производительности.

В данной статье с применением статистического инструментария был проанализирован уровень производительности труда экономики РА и его динамика в контексте выявления проблем повышения производительности.

Однако высокие темпы роста производительности труда требуют более высокого экономического роста для решения проблем безработицы, создания рабочих мест в стране, постепенно увеличивающейся поляризации и бедности.

AREVIK SANAMYAN
Actuarial and financial mathematics,
Bachelor's degree, 2nd year

ANALYSIS OF PRODUCTIVITY IMPROVEMENT ISSUES IN THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *Economic growth, labor productivity, employment rate, productivity convergence*

Unlike countries that are rich in natural resources to ensure the desired level of well-being, Armenia should rely on economic competitiveness that can be achieved by promoting an increase in productivity.

This article analyzes the level of labor productivity of the Armenian economy and its dynamics in the context of identifying problems of increasing productivity using statistical tools.

In general, the findings prove that the RA economy has recorded an increase in the rate of productivity. However, high rates of labor productivity growth require a higher economic growth for solving the problems of unemployment, job creation, gradually increasing polarization and poverty that still exist in RA.

ՆԱԻՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Կառավարում, բակալավրիատ,
3-րդ կուրս

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2009 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *ճգնաժամ, տնտեսական աճ, ՀՆԱ, տնտեսության ճյուղեր*

Յուրաքանչյուր երկրի տնտեսության անբաժանելի մաս են կազմում տնտեսական ճգնաժամերը, որոնց ազդեցության չափը գերազանցապես կախված է ճգնաժամը կրող երկրի զարգացման մակարդակից և ճգնաժամի փոխանցման ուղիներից[1]: Հայաստանի Հանրապետությունը նույնպես ունեցել է տնտեսական ճգնաժամեր, որոնք առանձնանում են իրենց բնույթով ու խորությամբ: Որպես այդպիսին, ստորև կներկայացվի 2009 և 2020 թվականների տնտեսական ճգնաժամերի համեմատական վերլուծությունը:

Ներածություն: Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա ժամանակաշրջանում, տնտեսական աճն ապահովող հնարավորություններին զուգահեռ, զարգանում են նաև այդ աճը խոչընդոտող հավանական և անկանխատեսելի ռիսկերը[2], որոնք գիտական ու մասնագիտական գրականության մեջ ստացել են «ճգնաժամ» անվանումը:

---

[1] Տե՛ս Դեպի ՀՀ ՀՖՃ փոխանցման ուղիները, հավելված 1:

[2] Տե՛ս Forecasting Economic Crises An Empirical Approach https://www.econ.uni-muench en.de/download/lehre-at-lmu/forecasting.pdf